ՍՈՒՐ ՄՏՔԵՐ

Կորուստից յաճախ աւելի օգուտ ենք ունենում, քան շահից։

—

Թէ կեանքիդ սայլը ճռռում է, ողբում,—խինդ ու ծիծաղի ձէթից քիչ քսիր. կերթայ անպատճառ։

—

Քաղաքավարի մարդու պախարակելն ու չհամաձայնելը —լռութիւնն է։

—

Ապրել այն բանի համար, որ ապրուստի աղբիւրն է —կնշանակէ իւր կոչումը դատած լինել։

—

Շատերն աւելի գերադասում են մի բանի մասին առանձին կարծիք ունենալ, քան ուղիղ։

—

Շատերն աւելի կարծում են, թէ վայելում են կեանքը, մինչ կեանքն ուտում է նրանց։

—

Մարդիկ կան, որ չիմացած բաներն ասում են. եթէ բազդն իրենց հետ է, մարգարէի տեղ են դնում նրանց։

—

Եթէ նախանձն աշխատում է ուրիշների առաւելութիւնները փոքրացնել՝ մի պատճառն էլ այն է, որ աւելի մեծ է տեսնում, քան են։

—

Քանի՞ն ամբողջ կեանքում ախ են քաշում, թէ ինչու թեւեր չունին, և մոռանում են այդպիսով, որ ոտքեր ունին։